

ՎԵՐԱԳՆԱԿ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 30 ՅՈՒՆԻՍ, 1929

ԹԻԻ 13

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (3)

ՄԵՐ ՆԱԽՈՐԴ ՅՕԴՈՒՍԾԻՆ ՄԷՋ յիշած էինք այն արժէքներէն ոմանք, որոնք մեզ կը պարտադրեն յարգելու Հայց. Եկեղեցին: Ներկայ և յաջորդ յօդուածներով կ'ուզենք ջանալ Հայ Աւետ. Եկեղեցին ներկայացնելու, յայտնելով անոր մասին եղած քննադատութիւնները և իր իսկ պաշտպանած արժէքները:

ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐՋՆԵՐՍՈՒՂԱԿԻ կամ անուղղակի, պաշտօնական և մտերմական չըջանականերու մէջ, մանաւանդ Հայ Մամուլի անխտիր գրէթէ բոլոր ներկայացուցիչներուն կողմանէ խիստ քննադատութեան ենթարկուած է: Այս քննադատութիւնները կրնան առանց յետին մտքի, մաքուր շարժառիթով եղած ըլլալ կամ ոչ. բայց այս կէտը չէ որ պէտք է մեզ շահագրգռէ, այլ այն՝ թէ անոնք ո՞րչափ իրականութիւն են և թէ ի՞նչ է անոնց արժէքը: Իբրև Հայ Աւետ. Ժողովուրդ կ'արժէ որ ինքզինքնիս դիտելու ջանանք ուրիշներուն քննադատութեաց լոյսին տակ, անկեղծ և խոնարհ հոգիով մը տեսնելու համար մեր թերութիւնները իրենց բոլոր մերկութեամբը:

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Բողոքականութիւնը, կ'ըսեն անոր քննադատները, օտար շարժում մ'է, օտարներու կողմանէ ներմուծուած հայ կեանքին մէջ, պահուած օտար ոյժերով և հայուն սրտին չխօսող միջոցներով, օտար պաշտամունքի ձևով օտար երկեցողութիւնով, երբեմն օտար լեզուով և թէ այս շարժումը սկիզբէն ի վեր յառաջ մըղուած է մարդոց սական քաղաքականութեամբ՝ շահագործելով չքաւորութիւնը և աղիտութիւնը, վերստին մկրտելով դարերէ ի վեր արդէն քրիստոնեայ մարտիրոս ազգի մը զաւակները: Եւ այս բոլորին արդիւնքը եղած է պառակտում մը պզտիկ ժողովուրդի մը ծոցին մէջ: Հետեւաբար բոլոր քննադատութիւնները կ'ամփոփուին՝ արտերու մէջ հաստատուած սա զօրաւոր համոզումին մէջ՝ թէ բողոքականութիւնը ապապայնացուցած է հայերը, և զօրաւոր հարուած մը տուած է ազգային միութեան գէմ. այս համոզումին լաւագոյն թարգմանն է յայտնի ազգային գործիչի մը սա խօսքը թէ «բողոքականները նուազ հայեր են»:

ՊԵՏՔ Է ԱՆԵԿԵՂՄՈՐԷՆ և առանց վերապահութեան ըսել թէ այս քննադատութիւններուն մէջ արդարացի կէտեր կան. թէ բողոքական գործիչները իրենց ընդհանուր քաղաքականութեան և ընդ-

գրկած միջոցներուն մէջ անթերի եղած չեն: Թէ կրնայ պատահիլ որ ոմանք ստորին շարժառիթներով բողոքականութեան յարած ըլլան:

Բայց ըսել թէ Հայ Բողոքականութիւնը կեղծ շահասէրներու գործունէութեան արդիւնքն է, կը նշանակէ շատ չնչին ստորին պատճառ մը վերադրել շարժումի մը, որուն բարերար վերացուցիչ ազդեցութիւնը այնքան յայտնի կերպով կը տեսնուի շատերու կեանքին մէջ և հաւաքական կեանքի մէջ: Ոեւէ մէկ շարժում կը ծագի, կը զարգանայ և կ'ապրի իր ներքին իրական արժէքներու միջոցաւ միայն, անոր համար ըլլալով անհրաժեշտ պահանջին համեմատ:

ԲԱՅՑ Կ'ՈՒՋԵՆՔ ՄԵՆՔ ԾԱՆՐԱՆԱԼ
ուրիշ կէտի մը վրայ: Շատ որոշ կերպով կը տեսնուի թէ ազգայնականութեան գաղափարին մասին և Հայ Աւետարանականներուն ազգայնական զգացումներուն մասին սխալ համոզումներ, թիւրիմացութիւններ կան: Այն գաղափարային հոսանքները, ընկերային շարժումները և հաստատութիւնները, որոնք իրենց ծագումը կը պարտին օտար ոյժերու և ազդեցութիւններու չեն կրնար հակազդային նկատուիլ: Եթէ այսպէս ըլլար հայ կեանքը ամբողջ պէտք էր ոչ-հայկական նկատել: Հայ գրականութեան ստուար կարեւոր մասը թարգմանութիւններէ կը բաղկանայ, մեր գրական կեդրոնները զրեթէ միշտ Հայաստանէն դուրս և օտար ազդեցութեան ենթակայ եղած են: Մեր գրագէտները շատ անգամ պարզապէս Եւրոպական մեծ վարպետներու հետեւողները և աշակերտները եղած են: Ինքնատիպ գաւառացի գրիչներու թիւը շատ փոքր է եղած: Մեր երգած ազգային և զպրոցական երգերուն մեծագոյն մասը կամ հետեւողութիւններ կամ յարմար անյարմար թարգմանութիւններ եղած

են: Իսկ անոնց եղանակները յաճախ Եւրոպական են քան թէ հայկական:

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՆ ԻՆՔԸ արդիւնքն է Հրեայ, Ասորի, Յոյն միսիօնարներու գործունէութեան: Ուսումնասիրութեան կարօտ հարց մըն է՝ թէ արդիօք Հայ Եկեղեցւոյ ծէսերուն, երգեցողութիւններուն, կրօնական գրականութեան, պաշտամունքի ձևերուն եւ այլնի որչափ մասը հայ ստեղծագործ հանճարին ծընունդն է, և որչափ մասը՝ օտար փոխառութիւններ: Բայց այս պարագան բաւական չէ ըսելու թէ հայ մշակոյթը, և եկեղեցւոյ հայկական չեն, ազգային չեն: Աշխարհի մէջ և ոչ մէկ տեղ թէ՛ անհատական և թէ՛ հաւաքական կեանքը չէ կերտուած միայն անհատին կամ այդ որոշ ժողովուրդին սեպհական ջանքերովը, առանց ոեւէ փոխառումի և առանց արտաքին ազդեցութեան: Եւ այս նոյնիսկ ո՛չ փափաքելի է և ո՛չ ալ օգտակար: Քաղաքակրթութիւնը մեծ գարկ մը կ'ստանայ, մարդկային կեանքը բարձր թռիչներ կ'առնէ երբ արտաքին առողջ տարրեր ներմուծուին անոր մէջ:

ԲԱՅՑ ՀՈՍ ԿԱՅ ԿԱՐԵՒՈՐ կէտ մը, որ պէտք է անտեսուի: Ոեւէ մէկ արտաքին, օտար աարք մը կրնայ հիւրընկալուիլ և օգտակար ըլլալ՝ եթէ ան հակառակ չէ զինքը ընդունող անհատին կամ ժողովուրդին բնութեան, հոգեկան, ֆիզիքական, ցեղային եւ տեղական պայմաններուն: Աւետարանական շարժումը հայերու մէջ պէտք է քննադատել անոր համար որ այն օտար շարժում մըն է, օտար ոյժերու միջոցաւ պահուած, անոր երգեցողութիւնները և զբաղանդութիւնը օտար մտայնութեան ծրարանդ ենեային, բայց պէտք է ուսումնասիրել թէ այդ օտար տարրերը որչափ կը համաձայնին հայ ցեղային և ֆիզիքական պայմաններուն, հայ հոգեկան

կազմին: Կ'ընդունինք չափով մը որ Հայ Աւետ. եկեղեցին պէտք է չափով մը հայանայ: Բայց այս ուղղութեամբ ուսումնասիրութեան կը կառօժին քե Հայ Առաք. եւ քե Հայ Աւետ. եկեղեցիները: Մեր նշանակելն զուրսէն երկայնացուցնել՝ թէ որոնք են այն օտար տարրերը այս երկու քոյր եկեղեցիներուն մէջ որոնք հայ կեանքին պայմաններուն չեն յարմարիր եւ ուստի ալ տակար չեն: Բայց կ'ուզենք չեղտել դարձեալ թէ ունէ հաստատութիւն չի կրնար ապագային նկատուիլ միայն անոր համար, որ օտար ազդեցութիւններու զրոշմը կը կրէ ան:

ՈՅԻԷ ՄԷԿ ՄԻՈՒԹԵԱՆ ՀՍՄԱՐ Հայագրագետը կողմերը փոխանակ իրարու բացասական կէտերը նկատի առնելու պէտք են գտնելու ջանալ իրարու իրական եւ զրական արժէքները: Արդ որոնք են այն արժէքները որոնց կը պարտի Բողոքական եկեղեցին իր ծագումը եւ որոնցմով կը պահէ իր գոյութիւնը

ՅՈՒՈՒԱԾՆԵՐ

ԿԵԱՆՔԻ ԿԵՑՈՒՍԾՔԸ

Ամբողջ աշխարհը քամարա մէ, Հաճեցէք հաճոյալի կենալ:

Մարդիկ չարունակ կը լուսանկարեն:

Անհատի մը խորհուրդները եւ առօրեայ արարքները տնվոյ կերպով կ'արձանագրուին նախ իր ֆիզիքական, մտաւոր եւ բարոյական կեանքին վրայ: Եւ յետոյ անոր կեանքէն տարածուող ապաւորութիւններուն ենթակայ են իր շուրջը գտնուողները: Ամէն օր գանազան պարագաներու տակ եւ տարրեր միջոցներով հաղորդուած այս ապաւորութիւնները մտքի որոշ պատկերներու կը վերածուին: Այն ընդունուած ապաւորութիւններէն եւ անոնցմէ գոյացած

մտքի պատկերներէն կրնայ ազդուիլ ենթականերուն մինչեւ իսկ բարոյական կեանքն ու նկարագիրը:

Ներսէն ու զուրսէն մարդուս վրայ ուղղուած այս կենդանի քամարաները զործի վրայ են ամեն տեղ ու ամեն ժամ, այնպէս որ մարդս կը ապաւորէ եւ կը ապաւորուի չարունակ՝ զիտակցաբար կամ անզիտակցաբար:

Մեր կեանքէն տարածուած՝ ենթակայական եւ առարկայական այս բազմազան ապաւորութիւնները ջնջել, կամ բարեփոխել այնքան զիւրին չէ որքան լուսանկարիչի մը ապակիին վրայ յանձնուած ֆիզիքական պատկեր մը:

Ինչո՞ւ, ուրի՞մն, մարդիկ կը թերանան իրենց կեանքին լուսագոյն կեցուածքը տալու մէջ: Ի՞նչ է պատճառը որ շատ մը մարդիկն են իրենց առօրեայ կեանքի ընթացքին մէջ այնքան զգոյշ ու արթուն չեն որքան լուսանկարիչի մը ապակիին առջեւ նստողները: Որովհետեւ ոմանց համար կեանքը իր բաղձրագոյն արժէքները կորոնցուցած է: Այսպիսիներուն համար կեանքի միակ նշանակութիւնը ֆիզիքական է: Եւ յետոյ ոմանք ալ այնքան անձնասէր են որ ուրիշներուն գոյութիւնը կ'արհամարհեն: Ինք իր բարձրագոյն բարիքին հանգէպ անտարրեր գտնուող մէկը ուրիշներուն բարիքը որ աստիճան կրնայ խորհիլ ու ըստ այնմ վարել իր կեանքը: Եւ վերջապէս կան միամիտներ ալ որոնք կը կարծեն թէ աշխարհի վրայ գիրենք տեսնող չի կայ: Կը խորհին որ ունէ կերպով մարդոց ուշադրութիւնէն կրնան խուսափիլ: Այս ուղորմելիներ՝ իսաւորին՝ պահելու եւ ծածկելու կարողութեանը վրայ աւելի մեծ վստահութիւն ունին քան յոյսի խորաթափանց ու խուզարկող զարութեանը վրայ:

«Հաճեցէք հաճոյալի կենալ»: Դրական ու արմատական է այս խօսքերուն թելադրութիւնը: Կեանքը իր ծուռ ու

տգեղ կեցուածքին մէջ պահելով հանդերձ անոր տպաւորութեանց վրայ չենք կրնար իշխել: Նախ շտկէ՝ կեցուածքդ, եթէ կը փափաքես լաւագոյն պատկերը ստեղծել քու եւ շուրջիններուդ մէջը: Քառսէն ներդաշնակութիւն չի ծնիր:—

Բայց ո՞րն է հաճոյալի կեցուածքը: Վերոյիշեալ խօսքերուն առաջին անգամ հանդիպած եմ փոքրիկ օրացոյցի մը Մարտ եւ Ապրիլ ամիսներուն ցուցակները իրարմէ բաժնող ճերմակ քարտի մը վրայ: Անոնք կարծես թէ ընթերցողը պահ մը երկու ամիսներուն ճիշտ մէջտեղը կենեւելով ըսել կ'ուզէին. «Ամբողջ աշխարհ քամարա մ'է, ուստի հաճեցէք ձեր կեանքին Ապրիլեան, զարնանային կեցուածք մը տալ՝ մերկանացնել Մարտականը, ձմեռնայինը:»

Գարունը՝ երգի, գուարթութեան եղանակն է: Հոն համայն բնութիւն, երգէհոնի մը կը վերածուի: Երգ ու ներդաշնակութիւն կը վազէ՝ սարէն ու ձորէն, ծառէն ու բոյսէն: Վերոյիշեալ խօսքերը կարծես թէ ըսել կ'ուզեն. «Հետեւէ գարնանային եղանակին, ու ժպտ, երգե ու գուարթ եղիր: Մի կախեր երեսդ»: Հոգիիդ ներդաշնակութիւնները չար խորհուրդներու եւ կամ անտեղի յուզումներու ստուերին տակ մի խեղդեր: Սա կարկաչող առուակներուն ու դաշլալող թռչուններուն Ստեղծիչը՝ քու թէ Արարիչդ ու թէ Հայրդ է, Կը հաւատա՞ս ասոր: Ուրեմն լեզուով զաւանածդ՝ գէմքովդ մի ուրանար: Ինչ որ խօսքով կը պնդես, կ'արտայայտես, կեանքի կեցուածքովդ հաստատ է: Վերջտ ունիս: Ո՞վ չունի: Զրկումներու ենթարկուած ես: Շատ բազմաթիւ են նմաններդ: Մէկն ալ քու Հայրդ—Արարիչդ է . . . որ զրկուած է քու զոհաբանական երգ ու ժպիտէդ, եւ սակայն, հակառակ ասոր, նայէ, քու շուրջ խինդ ու ծիծաղ կը թափէ՝ ծաղիկներու չըրթ-

ներէն, ու թռչուններու կուրծքերէն: Հաճոյալի կեցիր: Ժպտէ ու երգէ, եւ գուարթութիւն ցանէ շուրջդ: Այն տուն իրաւունք կ'ունենաս երգ ու ժպիտ քաղելու քու եւ ուրիշներու կեանքէն:

Գարունը գեղեցկութեամբ եղանակն է, կեանքը ոմանց մէջ այս տէսակէտով ալ գարնանային կեցուածք մը ունի: Անիկա ոչ թէ միայն բարի է, այլ նաեւ վեղեցիկ: Հոն ճշմարտութիւնը պարզարուած է շնորհիւ երկնահիւս պատմուճաններով: Անկեղծ է ան, անարատ ոսկիի նման, բայց հեռու է կոշտ ու կոպիտ ըլլալէ, ընդհակառակը՝ շուշաններու վառիչութեամբ, ու մեխակներու քաղցրութեամբը պճնուած: Իրաւ է թէ քաջ ու անվեհեր է ան, բայց անբարտաւան չէ, այլ հեղ ու խոնարհ, ու մեծ հոգիներու պարզութեամբը վեհացած: Ան՝ արդարութիւնը եւ սրբութիւնը ոչ թէ միայն կը պաշտպանէ, կը ջատագովէ, այլ նաեւ կը պիտգնէ զանիկա: Բարութիւնը անոր մէջ ոչ թէ միայն կը փայլի, այլ նաեւ կը տափգնէ, կը ներշնչէ: Օղբ՝ Մարտի բերնին մէջ կը սառի, կը սառեցնէ, իսկ Ապրիլի չըթունքներէն բղխած՝ ծաղիկներու զգուռը, շոյող ու ջերմ համբոյրն է ան: Այժմ, կայ բարութիւն մը որ հաճոյալի է, շնորհալի է, ու անոր գայրոյթին մէջ իսկ, դարնանային փոթորիկներու նման, վարդի բոյր ու շուշաններու ժպիտը կայ: Արարչին ստեղծագործութեանց զլուսգործոցն է բարիին՝ գեղեցիկը, ու արդարին՝ շնորհալին:

Արեւի

Կ. Յ. ՍՊԱՆՊՈԼԷԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ ՊԱՐԵԼՈՒՆ

Քրիստոնեայ ըսելով կը հասկնանք այն անձը որ վերստին ծնած է Սուրբ Հոգիով՝ Աստուծոյ Խօսքին միջոցաւ, եւ այս կերպով եղած է անդամը Քրիստոսի անտեսանելի Եկեղեցւոյն:

Յետագայ պատգամը չէ ուղղուած այնպիսիներուն որոնք միմիայն անուշո՞վ Քրիստոսեան են: Անանկներուն համար խնդիրը ճշմարիտ Քրիստոսեան ըլլալ է: Քրիստոսեի կեանք տպրելու մասին կրթութիւնն ստանալէ առաջ պէտք է նախապէս Քրիստոսը ընգտնիլ:

«Պարը աշխարհէն է, թէ չէ»: Ահաւասիկ հարցում մը որուն պէտք է պատասխանեն քրիստոսեաները: Եթէ աշխարհիկ գութարճանք մըն է՝ քրիստոսեաներուն անոր հանդէպ բռնկիք զիրքըն ու վերաբերումը որոշեալ անվիճելի է:

Պարը աշխարհային կը նկատուի հաւատացեալի վրայ ունեցած ազդեցութիւններովը: Բարեպաշտութիւնը կը մեղցնէ, խիղճը կը քանդէ, հոգեւոր ոյժը կը կործանէ, Սուրբ Հոգին կը տըրտմեցնէ և աղօթքի կեանքը կը վտարէ: Աղօթող ծուռկերը և պարող ոսկերը չեն կրնար միասին ընթանալ: Պարող անհատ մը կրնայ որոշ ձեւով մը աղօթել, սակայն աղօթելու վայրկեանին ջերմեռանդ պաղատանք, ճշմարիտ աղերսութեամբ, սուրբ օծում չի կրնար ունենալ: Ահապարանի պաշտօնեայ մը որ կը պարէ այգ վայրկեանէն սկսեալ իր ներսիդին դառապարտութիւնը ընդունած է: Ո՞վ պիտի ըսէ կամ ընդունի իր քարուղած Ահապարանը: Նմանապէս եկեղեցւոյ անդամ մը որ կը պարէ գործութիւն չ'ունենար կորուսեալ հոգի մը խառաբէն Ահապարանի յոյսին բերելու:

Պարը յիշուած է Սուրբ Գրոց մեջ: Բայց ի՞նչ պարագաներու տակ. նախ իրր կըրօնական պաշտամունքի ձեւ մը ընդհանրապէս կանանց յատուկ՝ կատարուած զլիաւորաբար ցերեկ տառն, բաց օդի մէջ, հանրային պողոտաներու վրայ, դաշտերու կամ ծառաստաններու մէջ: Աստուածաշունչ մատեանին մէջ չի կայ նոյնիսկ մէկ հատիկ պարագայ մը որ երկու սեռէ անհատներ միասնաբար պարած ըլլան: Դաւիթ պարեց, որովհետեւ

Տէրոջմով ուրախացաւ: Երկրորդ՝ Սր. Գիրքը կը խօսի պարի մասին իբր մեղք, և իրր սովորութիւն մը որ մեղաւորնեւուն, ամբարիշտներուն և անբարեպաշտ ընտանիքներուն յատուկ է: Ձորօրինակ Հերովդիայի պարը՝ Հերովդէսի անխոհմ երկուսովը և Յովհաննէս Մըկըրաիչի զլիապատմովը վերջացաւ: Նաև կ'արժէ կարգալ տմարալիշտներու կենցաղին մասին Յորի տուած նկարագրութիւնը, որ կը գտնուի Յոբայ Գըրքին ԻԱ. գլխուն 6-15 համարներու մէջ: Կուռքերու երկրպագութեան կ'ընկերանային անվրէպ՝ զանազան տեսակէ պարեր, պարեր՝ հեշտադրվու նման գարու պարերուն: Ելից ԼԲ. 19 և 25:

Պարի պաշտպաններուն կողմանէ յաւճախակի ի մէջ բերուած բնադիրն է Ժողովող Գ. 4, «Աղալու ժամանակ (կայ) և պարելու ժամանակ (կայ) [Ռուսահայ թրգմ.]»: Երբ որ նկատի առնուի այն պարագան թէ հրեանելուն համար պարը կրօնական պաշտամունքի ձեւ մըն էր Յնովայի և կամ կուռքելու առջև կատարուած, յայտնի կ'ըլլայ համարին իմաստը:

Աստուծոյ խօսքը մեզ կ'ըզգուշացնէ: «Երանելի է այն մարդը որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ չքալիր, ու մեղաւորնելուն ճամբու մէջ չկենար»: Սաղմ. Ա. 1. «Կյոյրդ մի՛ ըլլաք խառարին անպսուղ գործելուն»: Եփես. Ե. 11. «Եթէ մեղաւորները քեզ զլիսէ հանելուզեն, դուն անոնց հաւանութիւն մի՛ տար»: Առակք Ա. 10: «Մի՛ սիրէք աշխարհը, ո՛չ ալ ինչ որ աշխարհի մէջ է»: Ա. Յովհ. Բ. 45: «Եթէ մէկը աշխարհը կը սիրէ անոր ներսիդին Հօրը մէրը չի կայ»: Ա. Յովհ. Բ. 16: «Այս աշխարհին սէրը Աստուծոյ դէմ թշնամութիւն է»: Յակ. Դ. 4: «Ելէ՛ք անոնց մէջէն ու պատուեցէ՛ք»: Բ. Կորն. 2. 17: «Աշխարհիս գրադմունքը խօսքը կը խեղդեն»: «Մատթ. Ժ. 22:

«Աշխարհէ չէք, հապա ես ձեզ աշխարհէ ընտրեցի»: Յովհ. ԺԵ. 19:

Զգուշանալու պատճառներ: Որովհետեւ անմաքուր խորհուրդներու, անպատշաճ խօսակցութիւններու, անհամեստ արարքներու և անբարոյական կեանքի կ'առաջնորդէ: Որովհետեւ հանրատուներու քննիչներու ընդհանուր վկայութիւնը այն է թէ կիներու անկումին գըլխաւոր պատճառներէն մէկը պարասըրահն է: Որովհետեւ քրիստոնեաները պարին մասնակցելով «անհաւատներու հետ լծակից կ'ըլլան» և անոնցմէ չեն տարբերիր: Որովհետեւ յաճախ օրիորդ մը կը պարէ պարասրահին մէջ մարդու մը հետ որուն հետ փոշոցին մէջ տեսնուելու պիտի ամչնար: Որովհետեւ պարը «մարմինին ցանկութիւնները» կը սնուցանէ և քրիստոնեաներու յանձնարարուած է «մարմնի խնամք մի՛ տանիք ցանկութիւններու համար»: Որովհետեւ պարը երբէք ստատարած չէ Նիրապիտեայ Դպրոցի վարժուհի մը, եկեղեցւոյ դորժաւոր մը, կին մը կամ մայր մը աւելի բարի և աւելի յարմար մէկը ընելու իր կոչումին համար: Որովհետեւ եկեղեցւոյ անդամ մը որ կը պարէ գայթակղութիւն մըն է, և աշխարհ գանդիկա կեղծաւոր կ'անուանէ: Որովհետեւ զարուս պարը կը պահանջէ այնպիսի շարժումներ զորս կարելի չէ կատարել առանց սեղմ հպումի պարտղներու մարմիններու: Որովհետեւ հիմակուան պարերը բողանոցներու մէջ հնարուեցան ամենէն վատթար մարդոց և կանանց կողմանէ և շատ հնարաւոր կերպով մը պատուականութեան ձեւին տակ ընկերութեան հաւանութիւնը ստացան:

«Ասոր համար ելէ՛ք անոնց մէջէն ու զատուեցէ՛ք, կ'ըսէ Տէրը, և պիղծ բանի մի՛ գպչիք, «Ու ես ձեզ պիտի ընդունիմ, և ես ձեզի հայր պիտի ըլլամ, ու զուք

ինծի տղաքներ և աղջիկներ պիտի ըլլաք, կ'ըսէ Ամենապալ Տէրը»: Բ. Կորնթ. 2. 17-18:

Պուհեհու-Այրեւ Սպանէ. Թարգմանեց Յ. Մ. ՀԱԼԷՊԼԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

1. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Գ.

Ինչպէս տեսանք մեր վերջին յօդուածով հայոց հեթանոսական կրօնքը արեւելեան զրագաշտի և արեւմտեան կոապաշտութեան մէկ խառնուրդն էր ուր ներմուծուած էին նաեւ ազգային և քաղաքական կրօնէ տարրեր: Կրօնը՝ ինչպէս միշտ, հեթանոսական շրջանին մէջ ալ մեծագոյն գուրգուրանքի առարկան դարձեր է մեր ազգին մէջ, այնպէս որ Ս. Գ. Լուսաւորիչ կնճոռտ և խրթին հարցի մը առջև կը մնար, որպիսին էր մէկ հարուածով ջնջել հեթանոսութիւնը և անոր տեղ քրիստոնէութիւնը հաստատել հայ սիրտերու մէջ: Ասկէ գատ կրօնական դասակարգի հեղինակութիւնը և հարստութիւնը զանցառելի արգելք մը չէին ներկայացներ: Անոնք, քուրմերը, տիրացած էին երկրին ամենէն արգասաբէր հողերուն մեծ մասին, նոյնպէս ուրիշ անշարժ կալուածներու կարեւոր մէկ տոկոսին, հետեւաբար սահաւապեական իշխանութեան այդ շրջանին, անոնք հօգուակներ զարձած էին երկրին ոչ միայն կրօնական, այլ նաեւ քաղաքական ասպարէզին մէջ: Առանց քուրմերու հաւանութեան, թագաւորներ չէին կրնար իշխել կամ գահազրկուիլ, առանց անոնց թոյլտուութեան պատերազմ իսկ չէր հռչակուէր կամ դաշնադիր ալ չէր կրնար կնքուիլ:

Այս ամէնը ծանօթ ըլլալով Լուսաւորիչի և Տրդատայ, անոնք խորհեցան իրենց զիրքերն ալ ճշդեղ քուրմերուն հանդէպ, այսինքն պաշտօնական և հե-

ղինակաւոր ձե մը տալ Լուսաւորչի պաշտօնին և հանգամանքին, Կեսարիա զրկելով և Յունաց Ղեւոնդիոս Արքեպիսկոպոսին ձեռամբ հայոց համար Կաթողիկոս օծել տալով զայն, ինչ որ կատարուեցաւ 302 թուականին: Կեսարիա այս ատեն օտար գաւառ մը չէր համարուեր Հայոց համար, թէև հռոմէական տիրապետութեան տակ կը գտնուէր:

Կեսարիայէն վերադարձին՝ Լուսաւորիչ կարճ ժամանակ մը Սեբաստիա կը մնայ և անկէ նոր զործակիցներ ալ առնելով կ'անցնի Կարին և անկէ ալ Տարօն, ճամբու վրայ եկեղեցիներ և վանքեր հիմնելով, քանդելէ վերջ մեհականները և առուուչանները: Տարօնի քուրմերը, որոնք կ'երևի յիշ մըն ալ աւելի հզօր էին կամ ազդեցիկ քան միւս գաւառներունը, չուզեցին հպատակիլ Լուսաւորչի կարգադրութեանց և երբ կարգը Վահեփանէան մեհեանը քանդելու եկաւ քուրմերու առաջնորդութեամբ հայ նախարարներ և ժողովուրդը ապստամբեցան և բուռն ընդհարում մը տեղի ունեցաւ հեթանոս և քրիստոնէայ հատուածներու միջև: Քրիստոնէականներուն յաղթանակով կռատունը քանդուեցաւ և անոր տեղ հիմնուեցաւ Տարօնի Ս. Կարապետ և Առաքելոց եկեղեցիները:

Տրդատ չառ մը նախարարներով և զինուորներով կը զիմաւորէ Լուսաւորիչը, իր վերադարձի ճամբուն վրայ և անոնք իրարու կը հանդիպին Տարօնի Բագաւան գաւառին մէջ, ուր Արածանի գետին մէջ թագաւորը և նախարարները, նոյնպէս բազմաթիւ ժողովուրդ և զինուորներ կը մկրտուին հայրապետին ձեռքով 303 Յունվար 6ին: Ասկէ վերջ Լուսաւորիչ կը ձեռնարկէ մեծ գործին, նիւթական և բարոյական կազմակերպութեան, հիմնելով գաւառական եպիսկոպոսութիւններ, տեղապահի կամ հայրապետական փոխտնորդի հանգաման-

քով, հաստատելով նորանոր եկեղեցիներ, վանքեր և քանդելով ինչ որ պաշտական, քաղցական կամ հեթանոս հայկական բոյր ունէր: Իր ձեռքով ձեռնադրուած եկեղեցականներու թիւը ոմանք 400 է աւելի կը նկատեն, որ չափազանցուած համարելու չէ, նկատելով որ կազմակերպչական այդ առաջին քայլերու մէջ «մարդն էր որ պիտի մշակէր երկիրը»:

Մեզի զրացի երկու ազգերն ալ, Վիրք և Ազուանք, Լուսաւորչի կարգադրութեամբ քրիստոնէայ գործած և ունեցած են եկեղեցական ինչպէս նաեւ կրօնական կազմակերպութիւններ, որոնք պատիւ կը բերեն Լուսաւորչի աւետարանչական և առաքելական Լոյման:

Հոս միջոնկեալ յիշելու ենք ուրիշ համաշխարհային կարեւորութիւն ունեցող դէպք մը: 313 ին Կոստանդիանոս՝ Հռոմի յաղթական կայսրը, յրիստոնէայ դարձած և Յիսուսի կրօնը ազատ նշանաւ էր Միլանի հրովարտակով, ինչ որ աստուածային կարգադրութեանց պահպանման էր, յետ երկարատեւ զոհութեանց: Կ'աւանդուի թէ՛ Տրդատ 313 ին, ընկերակցութեամբ Ս. Գ. Լուսաւորիչի, Հռոմ գացեր և իր խնդակցութիւնը յայտնէր Կոստանդիանոսի և Հռոմի եպիսկոպոս՝ Սեղբեստրոսի: Պնդողներ ալ կան որ, այդ այցելութիւնը ոչ թէ 313 ին կամ 314 ին, այլ 325էն վերջ կատարուած ըլլալու էր և այն ալ առանց Լուսաւորիչի ընկերակցութեան, որովհետեւ, շատեր կը կարծեն որ Ս. Գրիգոր այդ թուականին արդէն մեռած էր: Ազատամիտ ըլլալու համար պէտք է խորհիլ որ երկու ենթադրութիւններն ալ բան մը կորսնցնել չեն տար մեզի, ոչ ալ նպաստ մը կը բերեն ուրիշներու:

Լուսաւորիչ իր կազմակերպչական գործերը աւարտելէ վերջ, արդէն երկար տարիներու բանտային տառա-

պանքներէ և անասիլի զրկանքներէ ընկճուած, խոր ծիրութեան մէջ սկսաւ սիրել առանձնութեան և մենաւոր աշօթքի նուիրման կեանքը, որուն հետեւանքով կը խորհուի օգնական մը տալ անոր: Տաճատ նախարար, ծանօթ ըլլալով Լուսաւորչի ընտանեկան կեանքի պարագաներուն, կ'իմացնէ Տըրդատին որ Գրիգոր երկու գաւակներուն, որոնցմէ մին արդէն կղերի սքեմը հաղած: Տըրդատի հրամանով 306 ին Լուսաւորչի երկրորդ գումակը՝ Արիստակէս կը բերուի Հայաստան և իր հօր ձեռքով Հայոց հայրապետ կ'օծուի, որ այդ թուականէն անոր անբաժան գործակիցը կ'ըլլայ: Անկէ վերջ կ'աւանդուի որ, Լուսաւորիչ այլևս բոլորովին առանձնացաւ և ճգնարաններէ դուրս չէր ելլեր, որուն հետեւած է, կ'ըսեն, նաև Տըրդատ թապաւոր:

Լուսաւորչի վերջին տարիներուն կը գումարուէր Նիկիոյ ժողովը Արիստեան վէճին վերջ մը տալու նպատակով (325 ին): Կրկին կ'աւանդուի որ, Լուսաւորիչ և Տըրդատ հրաւէր ստացեր էին այդ ժողովէն, բայց երկուքն ալ խոր ծեղութեան հասած, Արիստակէսը զըրկեցին այդ գումարման որ կ'ըլլայ ներկայ 318 հայրապետներէն մին և որ կը խմբադրուի Հաւատոյ Հանգանակը — «Հաւատամք ի մի Աստուած» և այլն:

Ասկէ վերջ մշուշ մը կը պատէ Լուսաւորչի կեանքին վերջին օրերու գէպքերը, որ ըստ աւանդութեան առանձնացումի երկար շրջաններ եղած են և օր մըն ալ անծանօթ քարայրի մը մէջ այն կը միանայ իր մեծ և Սիրելի Փրկչին: Հովիւներ չեն ճանչնար դայն, կը տանին կը թաղեն անոր անչնչացած մարմինը, բայց քանի մը տարի վերջ հասկցուելով, իր նշխարները կը տարուին ամփոփուելու Թորդամ ասանը:

Ահա այսպէս կը վերջանայ Լուսաւորչի, անձնուէր, անյողողող և յարա-

տե քրիստոնեայի, աղօթքի և ծառայութեան, խունկի և օրհնութեան, սիրոյ և աւետարանչական ոգիի բազմաբախ կեանքը, իբրև տիպար բոլոր իրեն հետեող սքեմաւոր և անսքեմ քրիստոնեաներուն...: Մաղթենք որ անոր ջիւմեռանդ ոգիին սրբազան հուրէն մէջ մէկ կայծ ալ մեզ բոլորիս շնորհէ Աստուած:

Հաղպ

ՌԵՏՈՒՆԻ

ԿԱՊՈՅՏ ՀԱՋ

Այս հիւանդութիւնը վերջին միջանի ամիսներէ ի վեր զօրաւոր կերպով տիրած է Հիւսիսային Սուրիոյ մէջ: Հետեւաբար կը յուսանք որ այդ մասին զրեւ անպատճառ օգտակար պիտի ըլլայ:

Մանուկներու յատուկ չատ փոխանցիկ հիւանդութիւն մ'է այս, որ միշտ չի տեսնուիր երբեմն երբեմն երեւան կուգայ, ապա ամէն կողմ զրաւելէ և տիրելէ վերջ կ'անյայտանայ: Ընդհանրապէս մանուկը՝ հարսանիթի մէջ եղածին նման՝ իր կեանքին մէջ միայն մէկ անգամ ենթակայ կ'ըլլայ այս հիւանդութեան: Երբեմն կը տեսնենք որ մեծերն ալ, մանաւանդ այս հիւանդութեամբ վարակեալ մանուկներուն մայրերը կապոյտ հագի ենթակայ կ'ըլլան: Հիւանդութեան սկզբնական շրջանին անոր ախտաճանաչումը դիւրին չէ, բայց դիւրին կ'ըլլայ ճանչնալ դայն, երբ մանուկը կ'սկսի աքլորի ծանօթ ձայնը հանել: Կապոյտ հագը իբր փոխանցիկ հիւանդութիւն մը երբ երեւան դայ տեէ շրջանակի մը մէջ, տեէ մանուկի մը մէջ սկսող հագի մը համար պէտք է կատարածիլ անոր կապոյտ հագ ըլլալուն: Շատ յարմար կերպով խելոդող ածականը աւրուած է այս հիւանդութեան: Այս հիւանդութեամբ վարակեալ պատիկը 15-20 անգամ յաջորդաբար կը հազայ, ապա

երբ կարգը կուգայ շուռն առնելու՝ խոչափողը կերպով մը կը կծկուի և կը նեղանայ, օդը դիւրութեամբ ռոքերը չի կրնալով մտնել այդ անծանօթ ձայնը յառաջ կուգայ. և պզտիկը չկարենալով պէտք եղածին չափ օդ առնել կատկապոյտ կը կտրի, այսինքն խեղդուածի պէս կ'ըլլայ: Պզտիկը ահա այս վիճակէն վախնալով օգնութեան համար իր մօրը կը փաթթուի:

Այս հիւանդութեան մանրէն տակաւին չէ գտնուած: Կապոյտ հալի՝ հարսանիքին երեւումէն կամ առաջ կամ աւտոր բուժուելէն անմիջապէս վերջ տեսնուելուն համար իբր վերջինին մէկ ընկերը նկատուած է: Այս հիւանդութիւնը թէպէտ շատ վտանգաւոք չի նշկատուիր, բայց ատկէ մեռնող մանուկներ ալ անպակաս կ'ըլլան: Մահը շատ անգամ կը պատահի երբ կապոյտ հալը թոքախտի երեւոյթը առնէ: Կապոյտ հալը կարեւոր հիւանդութեանց շարքին մէջ կը դանդաղ նաեւ անոր համար որ անոր բուժումէն վերջ իբր արդիւնք կարգ մը հիւանդութիւններ կը ծագին: Թոքախտը կրնայ անոր յաջորդել, սրտին դանդաղութիւնը վնասուելուն մէկ պատճառն ալ կապոյտ հալը եղած է:

Վարակումի տեսակէտէն էն վտանգաւոր նիւթը կապոյտ հալ ունեցող մանուկին արտադրած մազասն է, հիւանդին հազուադէպ, անկողինը, գաւաթը և գդալն ալ վարակիչ են: Նոյնիսկ հիւանդին պառկած սենեակին օդը կը փոխանցէ: Մանուկը երբ կը հազայ իր թոքերէն արտահանուած մազասն շատ փոքր հատիկներ օդի մէջ կը ցրուին, հոն առնել մը կը մնան և ուրիշ մանուկներուն վարակուելուն պատճառ կ'ըլլան: Այնպէս կը կ'արժենք որ մեր երկրին մէջ հարսանիքի և կապոյտ հալի նման հիւանդութիւններու տարածման պատճառ եզոք էն կարեւոր կեդրոններէն

մէկը մեր բազմութիւններն են: Մեր բազմութիւնը օդէ և արեւէ չուրկ ստորերկեայ չէնքեր են, ուր կը բերուին լուսանուելու համար ապաքինման շրջանին մէջ գտնուող հիւանդները, փոխանակ տան մէջ լուսնալու: Այնպէս որ այս հիւանդութիւններու միջոցին վտանգաւոր մանրէներու բոյն կը դառնան բազմութիւնը, ուր զաջող մանուկները անոնցմէ վարակուելու վտանգին մէջ կը գտնուին:

Կապոյտ հալը թոքային հիւանդութեանց մէջ ամենէն շատ մազասն արտադրող տեսակն է, հազուադէպ առնել ատկէ մազասն մազասն կ'ըլլէ: Մեծ մանուկները կրնան այս մազասնը դուրս հանել, բայց պզտիկները զայն կը կլլեն չկարենալով զայն դուրս հանել: Ահա այս կը բաւէ բացատրելու փոքրահարութիւնը և աղիքներու բորբոքումը, որոնք յաճախ կը տեսնուին կապոյտ հալ ունեցող մանուկներուն մէջ: Կապոյտ հալի մանրէները աղիքները կ'իջնան և հոն ալ փոքրահարութիւն և բորբոքում յառաջ կը բերեն, ինչպէս որ կրնեն թոքերուն մէջ: Մայրերը պէտք է լաւ մընեն այս պարագան, և պէտք է սորվին իրենց մատին փաթթած շղարչով մը կոկորդին մէջի մազասն քաշելով դուրս հանելու կերպը:

Այս հիւանդութեան միջոցին ստատիկ կամ թեթեւ անկանոն ջերմ մը կը բնայ տեսնուիլ. ջերմին աստիճանը 40 ի նոյն իսկ աւելի կրնայ բարձրանալ: Թիթէն արիւնի հոսումը և նոյն իսկ մազասնի հետը միասին թոքերէն արիւնի դուրս գալը հաջուաղէպ երեւոյթներ չեն: Արիւնի երեւումէն շատ վախնալու պատճառ մը չկայ, ընդհանրապէս բուժելի է ան: Այս հիւանդութեան մէջ յաճախ պատահող փոխումը՝ ընդհանրապէս ստամոքսի հիւանդութեան մը արդիւնքը չէ, այլ ստատիկ հալի իբր արդիւնք թոքերուն արագ արագ ստամոքս-

սին վրայ ճնշելուն պատճառաւ հոն զըտ-
նուող նիւթերուն մեքենական կերպով
զուրս հանուիլն է միայն:

Հաւազոյն բանն է այս հիւանդու-
թեամբ չի վարակուիլ, հետեւաբար բուժ-
ուելու խաւազոյն միջոցն է չվարակուիլ:
Մանուկները պէտք չէ որ բաղնիքներու
զբօսովայրերու եւ ուրիշ ժողովովայ-
րերու տարուին, անոնք պէտք է յա-
ճախ բացօթեայ տեղեր պտոյտի տա-
րուին: Միւս կողմէն ալ այն մայրերը
որոնք կապոյտ հագի ենթակայ եղած
պղտիկներ ունին, պէտք չէ վանոնք
կիկեղեցի, զպրոց եւ այցելութեան տա-
նին, եթէ կարելի է պէտք են անոր
զատ սենեակ մը յատկացնել, եւ զառ-
զգալ, զաւտթ եւ ճաշի աման զործա-
ծել տան. այսպէս ընելով խղճի համե-
մատ շարժած կ'ըլլան: Թոքերէն դուրս
կ'ըլլող մաղանները պէտք է մասնաւոր
ամանի մը մէջ հաւաքուին եւ ապա ար-
տաքոյի մը մէջ թափուին:

Կապոյտ հագի բուժումը: Շատ ցա-
ւալի պարագայ մըն է այն թէ այս հի-
ւանդութեան կատարեալ բուժումին
համար տակաւին զարման մը զանուած
չէ: Անոր մանրէներուն տակաւին չզըտ-
նուիլը մեծ արդեւք մը եղած է անոր
բուժումին համար պէտք եղած շիճուկ-
ներու պատրաստութեան: Ներկայիս
թէպէտ պատուաւոր մը կը գործածուի
անկէ չվարակուելու համար եւ շիճուկ մը՝
վարակուելէ վերջ բուժումի համար,
բայց տակաւին վճռական վերջնական
արդիւնքներ ձեռք ձգուած չեն: Կա-
պոյտ հագը ընդհանրապէս երկու ամիսի
շափ կը տեւէ, ծանր տեսակները նոյն
խիւ անկէ աւելի երկար կը տեւեն: Ան-
կէ բուժուելու համար մեզի ծանօթ էն
ազգու զարմանն է մաքուր, ու անփո-
շի օդը: Յաւալի է տեւել թէ տակա-
ւին մեր մէջ կան ծնողներ որոնք զուռն
ու պատուհանները կը գոցեն, որպէսզի
հիւանդը ցուրտէն պաշտպանելով բու-

ժելու ջանան զայն: Կապոյտ հագ ու-
նեցող պղտիկ մը անպատճառ քաղաքէն
դուրս օրական երկու ժամ մաքուր օդ
ծծելու է, փորձէ՛ այս, եւ առաջին օր-
ուան մէջ իսկ անոր օշուտը պիտի տես-
նես: Ամառնային գիշերները պղտիկը
պէտք է տանիքին վրայ պառկի. բնա-
կանաբար հիւանդը պէտք է լաւ հագցուի
եւ ծածկուի: Մանուկին կերակուր-
նիւրը պէտք է պարզ պատրաստուին,
եւ ան օրը հինգ անգամ, բայց քիչ քանա-
կով, պէտք է կերակուրի. ստամոքսին
լեցուիլը պատճառ կ'ըլլայ թէ հագի
չուտ գալուն եւ թէ ստամոքսին մէջ ե-
ղող նիւթերուն փոխուելուն:

Դեղերը ոմանց կարծածին պէս բոլորո-
վին անօգուտ չեն, բժիշկներուն զիմի
օգտակար կ'ըլլայ: Շատ օգտակար կը
ըլլայ եթէ պղտիկը, որուն հագը շատ
ծանր տեսակէն չէ, ամէն օր տաք ջու-
րով լողցուի եւ ապա անկողնի մէջ հան-
զըստանայ: Կը փափաքինք օգտակար
եւ շատ պարզ դեղ մը յանձնարարել մեր
այն ազգակիցներուն, որոնք իրենց
զիւղերուն մէջ չորիկ են բժիշկներէն:
Ասիկա ամէնուն ծանօթ խոտ մըն է,
ծոթրինը, որուն մէջ (THYMOL) ծոթու-
րոզի անուն դեղ մը կը գտնուի. ճիշտ
թէյի պէս պէտք է պատրաստել զայն,
եւ անոր ջուրը առատօրէն պէտք է խըմ-
ցնել մանուկին: Զգուշանալու է ծոթ-
րինը հոացնելէ, հոացող ջուրին մէջ
պէտք է ծոթրինը նետել եւ ապա այդ
վիճակին մէջ հանդիստ պահել. քանզի
եթէ ծոթրինը հոացուի անոր մէջի ծո-
թրոզին չուտով կը չոգիանայ եւ կը
թռչի. ճիշդ թէյի պէս պէտք է պատրաս-
տուի եւ պէտք է համեմատութիւնը հինգ
առ հարիւր ըլլայ, այսինքն 100 տիրհէմ
ջուրի մէջ հինգ տիրհէմ ծոթրին գնելու
է:

Հարկ

(Տօքթ.) Ա. Ճէղէձեւ

ԲԱՐԵՐԱՐ ԱՐԴԻԻՆՔՆԵՐ

Մեզի համար պատիւ մը կը նկատենք՝ հետեւեալ տեղեկութիւնները տալ Պէյլանի դպրոցներուն միութեան մասին, զոր ութը ամիսէ ի վեր թերթերը յաճախ զբաւած էին իրենց սիւնակներուն մէջ:

Այս տարի Պէյլանի հայութիւնը բախտաւոր եղած է իր դպրոցներովը. վարանումով և կասկածանքով ձեռնարկուած այս գործը խորիսիս համը տուած է քիմքերուն: Նոյն հօր այս երկու գաւաղներուն ձեռք ձեռքի տուած և սիրտ սրտի կապուած գործակցութիւնը գնահատութեան արժանի ընկերային յեղափոխութիւն մ'է հայ կեանքի մէջ: Ուրախ ենք որ այս կարեւոր գործին մէջ առաջին քայլը տոնելու պատիւը մեզի Պէյլանցիներու անկ եղաւ: Մենք որոշած ենք որ յառաջիկայ տարին ալ շարունակենք միացեալ վարժարանը, քանզի մեր մէկ տարուան փորձը գոհացուցիչ արդիւնքներով վերջացած է, և կը մտնենք որ Տէրը շատ փարիսերու համար նոյն յաջողութիւնը մեզի շնորհէ:

Մեր Միացեալ վարժարանին մէջ յարանուական խորի չէ դրուած. ամէն առաւօտ Ս. Գիրքէն և եկեղեցական պատմութեան աշակերտներուն կրօնաբարոյական դասախօսութիւններ կը տրուին. քրիստոնէական և մեր ցեղային բարոյականը ներկայացնող դէժքերու մասին կը խօսուի: Ահա այս կերպով մեր մանուկներուն մէջ ամենուն ուշադրութիւնը դրուող կրօնական յառաջդիմութիւն մը տեսնուած է, միւսնոյն ատեն իրենց առօրեայ դասերուն և ամսվերջի քննութիւններուն մէջ այնպիսի յաջողութիւն մը ցուցուցած են որ քննիչներուն ակնկալութիւնը զերազանցած է:

Դպրոցին ամսվերջի հանդէսը կատարուեցաւ Յունիս 16ին, հանդէսին առաջին մասին մէջ մանկապարտէզի մա-

նուկները մէկ ու կէս ժամի չափ ունկընդիւրները տեական հիացումի մէջ պահեցին իրենց արտասանութիւններովը, խաղերովը ու երգերովը, որոնք յայտնի էին թէ մեծ ջանքերու արդիւնքն էին: Տասը աշակերտներ իրենց ընկերներուն և վարժուհիներուն ուղղուած հրաժեշտի արտասանութիւնները ինչ, գնահատումի և երկարատե ծափերուն արժանանալով: Մեր վարժուհիին, Օր. Ռահէլ Պետեանի իբր մանկապարտիզպանուհի ցուցուցած կարողութիւնը և անխոնջ ջանքերը մեծ գնահատումի արժանի են:

Հանդէսին երկրորդ մասը կատարուեցաւ նախակրթարանի աշակերտութեան կողմանէ, որոնք իրենց գանապան արտասանութիւններովը ու երգերովը, շատ զոհ թողուցին ներկաները: Նամանաւանդ «Կը հնձես ինչ որ կը ցանես» խորտարով տրամախօսութիւնը ժողովուրդը հմայած է: Պէյլանի հայութիւնը ինքզինքը երկցս բազաւոր նկատեց այս առթիւ: Այս երեք ժամ տեղը հանդէսի միջոցին, այս տաք եղանակին, ժողովրդին առանց շարժելու և առանց ձանձրոյթ զգալու համբերութեամբ հանդէսին հետեւելը՝ ապացոյցն է կրթութեան և գործակցութեան համար ունեցած փափաքներուն և ջանքերուն: Մեզի մեծ հաճոյք պատճառած է տեղական պաշտօնէութեան և քաղաքին աւագանիին ներկայ գտնուիլը, որոնք մեծ ապէս զոհ մնացած են Պատ. Կ. Կըրգիտաբեանին ազօթքովը հանդէսը փափուեցաւ, և ներկաները շնորհակալ հոգիով և լաւ տպաւորութեամբ բաժնուեցան:

Յանուն Պէյլանի հայութեան մեր շնորհակալութիւնը կը յայտնենք տեղիս միւտիքին, Մուհամմէտ Ալի Պէյին, որ ժողովուրդը համոզած է, անոր աչքին տուել պարգևով միութեան պէտքն ու բարիքները: Ազնիւ միւտիքը այս շնոր-

Ջանին միջոցին իւրաքանչիւր յարան-
ուանութեան իրաւունքը պաշտպանած է,
և ամէն մէկուն համակրանքը և մաս-
նակցութիւնը շահելու համար իւրա-
քանչիւրէն երկու քական ներկայացու-
ցիչներով հոգարարձութիւն մը կազմած
և անոնց հետ զորակցած է, և խոստա-
ցած է ճիշդ այս ուղղութեամբ ալ զոր-
ծել իր հոս եղած բոլոր ժամանակամի-
ջոցին: Միութեան յաջողութեան կա-
րեոր պատճառներէն մէկն է նաև Տիար
Սարգիս Եէնիգօմշուեան, որ իբր ուսու-
ցիչ կառավարութեան կողմանէ մեր
դպրոցին տրամադրուած է և անաչառ
հոգիով մը աշխատած է: Մեր ժողո-

վրդին մեծ ուրախութիւն պատճառած
է սա պարագան թէ Տիար Եէնիգօմշու-
եան պէտքը զգացած է մասուորական
կրթութեան հետ կրօնա-բարոյականն
ալ տալ և ըստ այնմ ալ աշխատած է:
Միութեան զիրութիւն տուած է նաև
Տիար Գրիգոր Էմմանուէլեանի անկողմ-
նակալութիւնը և փորձառութիւնը և
Յրանսերէնի հմտութիւնը: Փառք Տէ-
րոջ, որ բարեբար արդիւնքներով մեզի
յաջողութիւն շնորհած է:

ՄԻՍՍԿ ՊԱՀԱՏԸՐԵԱՆ,

Անդամ

Միացեալ Վրժրնի. Հոգբրձիւան

ՄԱՐԿԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՐԿԱՆԻ
ՄԱՐԿԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՐԿԱՆԻ
ՄԱՐԿԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՐԿԱՆԻ
ՄԱՐԿԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՐԿԱՆԻ



ԱՆԴՍՐՁ ՄԵԿՆՈՂ ՄԵՍԻՍ

Տիար Յարութիւն Ս. Խարաճճեան
Յունիս 29ին, չարաթ տոտուն կաթ-
ուածի արդիւնք ըլլալով յանկարծամահ
կ'ըլլայ իր բնակարանին մէջ Հալէպ,
անմիջապէս թողլով իր այրիացած կիներ,
Տիկ. Մէննուշ Խարաճճեանի, գուտարը
Օր. Մէրին և որդին Պր. Պարպիւր, որ
բնատանիօք Պէյրութ կը բնակի տունէ

մը ի վեր: Յուդարկատութեան տը-
խուր հանգէսը կատարուեցաւ Յունիս
30ին, Կիրակի տոտուն ժամը 8.30ին
Ագիգիյէի Հայ Աւետ. եկեղեցիին մէջ,
մասնակցութեամբ բոլոր աւետ. ժողո-
վորդին: Հանգուեցաւ 1864ին ծնած
էր Այնթապ, և երիտասարդ հասակին
նուիրուած էր իր եկեղեցիին և ունեցած
էր ազգային շինարար գործունէութիւն
մը: Մեր խորին ցաւակցութիւնները:

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ**ՀԱՆԴԵՍՆԵՐՈՒ ՍՄԻՍԸ**

Յունիսի վերջը բոլոր վարժարանները ալ փակուած կ'ըլլան, ժողովուրդին տալով իրենց ա մ ա վ հ ր ջ ի հանդէսները և ուսումնաւարտներու խումբը: Բարէգէպ է հոս յիշել թէ կարգ մը նախակրթարաններ ալ չեն սարքեր այսպիսի հանդէսներ, որոնք իրենց միօրինակ պարզունակութեամբ ձեռով ամէն տարի կրկնուելով ձանձրալի հանգամանք մ'առած են, և մանաւանդ հակա մանկավարժական կը նկատուին, ոյժի և ժամանամի ահադին վատնումի փոխարէն յաճախ մի քանի ծախհարութիւններ ապահովելով միայն: Քաջարելելի կը գտնենք այս նոր երևոյթը նախակրթարաններու համար:

Ուսումնասիրաց Ընկերութեան գոյգ մանկավարժներու հանդէսները կատարուեցան Յունիս 12ին և 24ին: Ազգիկիյէի Հայ Աւետ. Եկեղեցւոյ մանկավարժներ հանդէսը կատարուեցաւ Յունիս 21ին, ճոխ բայց քիչ մը պէտք եղածէն աւելի երկար յայտադրով մը: Յայտնի էր թէ վարժուհիները երկար և ծանր աշխատանք թափել էին անոր համար: Այս տարի 17 մանուկներ մանկավարժէի տիպլոմներ ստացան:

ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐՃԱՐԱՆԻՆ ՀԱՆԴԵՍԸ

Հալէպի Կոյրերու Վարժարանը, հովանաւորեալ «Յրէնտղ ալ Արմինիա» Ընկերութեան կողմանէ, վերին հսկողութեամբ Վեր. Ս. Ս. Մանուկեանի, առաւ իր ամսագիրջի հանդէսը, կրկնելով զայն թէ Ազգիկիյէի և թէ Համիտիյէի Աւետ. եկեղեցիներուն մէջ: Դպրոցը ունի 19 աշակերտներ և երկու վարժուհիներ, իբր չէնք կը գործածուի հինգ ռէկա մէզը երկայնքով սենեակ մը: Աշակերտներ հոս կը սորվին Հայերէն, Արաբերէն և Անգլիերէն զրեւ և կարգալ և

խօսիլ: Կատարուեցան յստակ արտասանութեամբ, հայերէն տրամախօսութիւններ, խմբերգներ և մեներգներ, արտասանութիւններ. երգհոնի վրայ հղանակներ յաճախ կը զարնուէին աշակերտուհիներու կողմանէ: Կատարուեցան արաբերէն տրամախօսութիւն մը և անգլիերէն երգ մը, որուն խօսքերը գրուած էին դպրոցին վարժուհիին կողմանէ: Այս վերջինին կարողութիւնը, ազնուութիւնը և ջանասիրութիւնը մասնաւոր դնահատումի արժանի է: Հանդէսը անցաւ կատարելապէս յաջող: Ապա մրցանակներ տրուեցան մասնաւոր ջանք թափող աշակերտներուն: Վեր. Կ. Յարութիւնեան և Տիար Խ. Քարտաշ քաջաշէրական խօսքեր ուղղեցին դպրոցին և ուսանողութեան. հանդէսը վերջացաւ Վեր. Ա. Շիրաճեանի օրհնութեամբ:

ԱՂՋԿԱՆՑ ՍՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՐՁՐ ՎԱՐՃԱՐԱՆԻՆ ՀԱՆԴԵՍԸ.— Յունիս 17ին դպրոցին հին շէնքին մէջ, Ճէմիլիյէ թաղ, կատարուեցաւ հանդէս մը որ կը բաղկանար աւարտող կարգին աշակերտուհիներուն Ֆրանսերէն, Անգլիերէն և Հայերէն արտասանութիւններէն, ինքնատիպ գրութիւններէն, մեներգներէն և գաշնակի վրայ նուագներէն. հանդէսին սկիզբը և վերջը դպրոցին երգիչ խումբը խմբերգներ ըրաւ: Դպրոցը և աւարտող կարգը շնորհաւորելի են այս յաջող գեղեցիկ և կոկիկ հանդէսին համար, որ բոլորովին հոգեկան կազդոյր մը պատճառեց: Մասնաւոր ուշադրութիւն գրուեց Օր. Էլիզա Յովսէփեանի կարդացած «Գուշակութիւնները» գրութիւնը, որով կը կանխայայտէր իր դասընկերուհիներուն ապագան, զոր ծածկելով մեղմ երգիծանքով համեմտած գեղեցիկ երեսակայութիւն և պատկերաւիր ու գուարթ ոճ մը:

Յունիս 25ին կատարուեցաւ նոյն

դպրոցին տրվում արաշխուժի հանդէսը Ազիզիէի Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ: Ներկայ դպրոցը միացումն է Այնթապի Ազիզիանց Ամերիկեան Սէմինէրիին, հաստատեալ 1860 ին, և Մարաշի Ազիզիանց Ամերիկեան Գոլէճին. որով դպրոցին սօֆօմօր կարգը աւարտողները կ'ստանան Սէմինէրիի վկայագիր և սինելը՝ (երիցագոյն) կարգը աւարտողները՝ Հայ Սքուլի տնայլով: Դպրոցին ուսումնաւարտները Պէյրուէթի Ամերիկ. համալսարանին մէջ երկու տարի ևս կարգաւէ վերջը կրնան մասնագիտական ճիւղերու հետեւիլ: Այս տարի Սօֆօմօր կարգի վկայագիրները ստացան 24 օրիորդներ և Սինելը կարգի տնայլումներ առին 7 օրիորդներ: Վեր. Հ. Բիկս գործնական և զեղեցիկ ուղերձ մը խօսեցաւ «Հայ Օրիորդին Բաժինը Սուրբոյ Կիտնքին մէջ» նիւթին շուրջ և ըսաւ թէ Հայ օրիորդը իր ժառանգական համեստութեամբը, ջանասիրութեամբը, հաւատարմութեամբն ու քրիստոնէական հաւատքովը, որոնց մեծապէս կը կարօտի Սիւրիան, մեծ բաժին մ'ունի տեղական կեանքը ազնուացնելու մէջ:

ՄԱՆՁԵՐՈՒ ԲՈՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՆԻՆ ՀԱՆԴԵՍՐ (BOYS' HIGH SCHOOL): Յունիս 21ին, կէսօրէ վերջը այս դպրոցին կողմանէ հանդէս մը կատարուեցաւ Ազիզիէի Հայ Աւետ. Եկեղեցւոյ վարի սրահը, ուր նախապատրաստական բաժնի Դ. և Ե. դասարաններուն կողմանէ չորս լեզուէ արտասանութիւններ եւ երգիչ խումբի կողմանէ երգեցողութիւններ, հայ ժողովրդային երգեր կատարուեցան: Եւ Յունիս 24ին նոյն եկեղեցւոյ վերի սրահը, հոծ ունկնդրութեան մը ներկայութեամբ վկայականաց բաշխումի հանդէսը կատարուեցաւ: Առաջին հանդէսի արտասանութիւն կատարողներու մէջ առաջնութիւնն շահողները կրկնեցին իրենց արտասանու-

թիւնները: Երգիչ խումբը երգեցողութիւններ կատարեց, որոնց մէջ «Անձրեւի Կաթիլներ»ը կտորը ամենայնովն էր: Ուրախալի էր զիտել մեծ թիւով աշակերտներու յաջողութիւնները լեզուական, գիտական, գծագրութեան դասերուն և մարմնամարզանքի մէջ: Ուրախալի էր նաեւ սա պարագան թէ մասնաւոր յաջողութիւններու համար մրցանակ-յատկացնող անհատներու թիւը աւելցած էր: Տօքթ. Ա. Ալթունեան վերահաստատեց այս տարի իր հինգ օում. ոսկինոց մրցանակը, չոր այս տարի չահեցաւ Պր. Վահրամ Պապիկեան, Տօքթ. Ֆ. Յովնանեանի կողմանէ հաստատուած է մրցանակ մը լուագոյն կարճ պատմութիւն գրողին, ունէ լեզուով, չոր չահեցաւ Պր. Յակոբ Գունտազեան, Նիւ Եօրքաթնակ Տիար Մ. Դարամանուկեան այս տարի 10 ոսկինոց նուէրներ տուաւ տարրեր մարզերու մէջ յաջողութիւններուն համար, դպրոցին գիտական դաստիարակ ուսուցիչը կէս ոսկի նուիրեց Պր. Ե. Տէր Մկրտիչեանի, կենդանաբանութեան դասին մէջ լաւագոյն նօթատետր պատրաստած ըլլալուն համար, որուն պարունակութիւնը և պատկերները, աշխատանոցի մէջ կատարուած մանրադիտակով անդամահատական քննութեանց արդիւնք են: Հայ Սքուլի գրական Մասնախումբը, որ կը հրատարակէ չորս լեզուով Տը Րիփօրը պարբերաթերթը, նուէր ընդունեց ժամացոյց մը, իր գրական յաջող աշխատանքին համար, իսկ Մարմնամարզական Մասնախումբը ընդունեց՝ մարզիկի մը մետաղէ արձանը իր աչքառու գործունէութեանը համար: Մեծ թիւով աշակերտներուն կուրծքերը զարդարուցան արծաթէ զարդասեղներով, զանոնք ստանալու համար որոշ պայմանները լըրացուցած ըլլալուն համար: Այս տարի սօֆօմօր կարգի վկայագիրներ տրուեցան ինը աշակերտներու որք են. —

Պ. Պ. Եռահաննա Տէր Մկրտիչեան եւ Լուսթֆի Հայտօսթեան (Մարաշ), Աստուածատուր Սատաղեան եւ Յակոբ Զաղլասեան (Քիլիս), Յարութիւն Նազարեան, Հայկազուն Մուրատեան եւ Զօրճի Միսիրեան (Այնթապ), Ա. Կըրկըրեան եւ Կարապետ Թէճըրեան (Հայաստան): Իոյժը ժողովուրդը շատ ուրախ էր այս հանդէսով, որ իր յաջողութեամբը կը յիշեցնէր Այնթապի Գոլէճին նախկին փառքը:

ՀԱՅԵՐ ԿԱՊԱՆԻ Մէջ

Կապանի մէջ փոքրաթիւ հայութիւն մը կայ անցործ եւ թշուառ, որոնք ապրուստի անմիջական միջոցներէն չուրկ' ազնիւարչ նամակներով օգնութիւն կը հայցեն:

ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻՆ ԻՐ ՄՕՐԸ ԲՈՎ

Օր. Լէպրիպէ Շէմմաս, զուստըը հանդուցեալ Վեր. Զօրճի Շէմմասի, որ Մփոլ ավ Րիլիմընի ուսանողուհիներէն է, ամառնային վաղանձը անցնելու համար վերադարձած է Լաթաքիա, իր մօրը քով:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՁԸ

ՇՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազոս քարգնահալին Զարդ Տիֆլիսի գրուածքներէն

ԳԼՈՒԽ Ա.

ՄՍՐԼԻՒ ՈԳԻՆ,

«Տէր», ըսաւ աղնուականը, «դուք ես չէ՞ք ուզեր խորհիլ այդ խեղճերու մասին:»

«Ինչո՞ւ, բանտերը ո՞ւր են, բանտ չը կա՞յ», հարցուց Սքուրճ:

— Բանտ չառ կայ, պատասխանեց աղնուականը դրիչը վար դնելով:

«Ալ ի՞նչ կ'ուզէք», շարունակեց

Սքուրճ, «քանի որ բանտերը իրենց բարեգործական դերը կը կատարեն, ի՞նչ հարկ կայ այլ ես մտաւորն ջուլու ծոյլերու մասին:»

— Սակայն քանի որ բանտը Ծնունդի երջանկութիւն տալէ շատ հեռու հաստատութիւն մըն է, ու մենք այս աղքատներուն ամէնը բանտ չենք կրնար զրկել, քանի մը հողի միասին մտածեցինք որ քիչ մը աշխատինք, զրամ հաւաքենք, ու անոնց համար ուտելիք, խմելիք ու վառելանիւթ ճարենք: Այս նպատակին համար Ծնունդի ժամանակը ընտրեցինք, որովհետեւ հիմայ է որ ումանք իրենց վիշտերն ու պէտքերը ամենէն շատ կ'զգան, մինչդեռ անդին ուրիշներ ալ կան՝ որ ճոխութեան մէջ կը յափրանան: Զեր անուանը դէմ որչափ զրեմ:

«Ոչինչ», պատասխանեց Սքուրճ:

— Միթէ կը փափաքի՞ք որ Զեր անունը չը գտնուի այս ցանկին մէջ:

«Կը փափաքիմ որ գործերուս արգիւք չըլլաք», ըսաւ Սքուրճ, քանի որ իմ փափաքս գիտնալ կ'ուզէք, պարտնայք, աս է պատասխանս, ես Ծնունդին գրօսանք չեմ ունենար, եւ չեմ ուզեր ծոյլերն ալ գրօսնել: Ես կը ջանամ որ առանկները բանտ զրկուին, հոն իրենց հաց կուտան:»

— Սակայն շատերը չեն կրնար բանտ երթալ, ուրիշներ բանտէն աւելի մահը նախամեծար կը համարեն:

«Եթէ անպատճառ մեռնիլ կ'ուզեն, աւելի լաւ, զոնէ ատ կերպով անպէտ մարդոց չափազանց աւելնալէն կ'ազատինք: Երթաք բարով, պարոն:»

Աղնուականները՝ որոշ տեսնելով որ աւելի երկարելը օգուտ մը չը պիտի ունենար, մեկնեցան: Սքուրճ նորէն իր գործին պարապեցաւ աւելի հանդարտ սրտով մը, միեւնոյն ատեն իր անձին վրայով աւելի մեծ համարում մ'ունենալով:

Այն ատեն մութն ու մառախուղը խիստ թանձրացան, և կեղեցիկն հին աշտարակը՝ որուն գոթական պատուհաններէն մէկուն մէջէն խոժոռազէմ գանդակը միշտ Սքուրճին կը նայէր՝ գաղտնալողի նայուածքով մը՝ աներեւութացաւ, և ալ ամպերուն մէջէն կը գարնէր ժամերն ու քառորդները, ու գարնէն վերջն ալ իր զոզոջունը թրթումները կը շարունակէր, իբր թէ սառած գլուխի մը մէջ ակռաներ իրարու կը գարնուէին ցրտէն:

Յուրաքանչեւ, մշուշը աւելցաւ: Փոքրիկ քթի մը տէրը, չարածիճի աղեկ մը, իր քիթը Սքուրճի վաճառատան տունէն ներս խոթեց ծնունդի սովորական երգը մը թմրեցնելով:—

«Շնորհաւոր ծնունդ, Աստուած ամէն տարի բարով հասցնէ Զեյ»:

Սքուրճ այնպիսի արագ շարժումով մը գծաքարչը ձեռք առաւ՝ որ երգողը վախէն փախաւ:

Վերջապէս վաճառատունը փակելու տանը եկաւ: Սքուրճ իր տեղէն վար իջաւ, ճաշին մէջ զրազիւրը կ'ըսպասէր, և երբ Սքուրճի մեկնելու պատրաստուիլը տեսաւ՝ մոմը մարեց, զլսարկը առաւ և յարգանք կայնեցաւ:

«Կարծեմ վաղը ամբողջ օրը վաղանձ ընել կը փափաքես», ըսաւ Սքուրճ անհաճոյ գէմքով մը:

— Եթէ հաճիք, տէր իմ, պատասխանեց զրազիւրը:

«Եթէ ինձի մնայ, ևս չեմ հաճիր», ըսաւ Սքուրճ, «եւ ուղիւ բան չէ ատիկայ, դիցուք թէ ևս օրին մէկը քու վարձքէդ հինգ զուրուշ կտրեմ, անիրաւութիւն կ'ըլլայ, այնպէս չ'»:

Տխուր ժպիտ մը անցաւ զրազիւրի գէմքին վրայէն:

«Հապա եթէ ևս քեզի լման օրական մը վճարեմ ոչինչի փոխարէն, ասիկայ անիրաւութիւն չ'ըլլա՞ր»:

— Բայց, տէր իմ, տարին միակ մէկ

օր մըն է:

«Շատ ապուշ խօսեցար, աղաս, ամէն Դեկտեմբերի 25ին զրազներս կոչող տեղէ վերջ տասնի անշնորհք պատասխան մը չատ քիչ բան է»: Եւ Սքուրճ ջղազրկու մատներով իր երկայն վերարկուին կոճակները կոճկելով, «ինչ որ է», ըսաւ, «վաղը ամբողջ օրը վաղանձ ըլլէ, պայմանաւ որ միւս օրը չատ կանուխ գանուխ հոս»:

Գրազիւրը խոստացաւ, և Սքուրճ մրմուռով դուրս եկաւ: Մէկ վայրկեան ետք վաճառատունը փակուած էր, և զրազիւրը, իր երկայն վերարկուին քրդանցքները իւրաւու վրայ բրած, խաւարին մէջ խարխափելով, չսան անգամ ծնունդ շնորհաւորող աղոց հանդիպելէ վերջ իր տունը հասաւ:

(Շարունակելի) (4)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԱԿՐԱԿԱՆ

Եկեղեցական Միութիւն

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Կեանքի Կեցումներ

ՎԵՐ. Կ. ՍԹԱՆՊՈԼԻՆԱՆ

Բրիտանական Պարեմը ԵՆ

ԹԻԳ. ՅՈՎ. ՀԱԼԷՊԻՆԱՆ

Ս. Դիգոր Լուսառից ԹԵՏՈՒՆԻ

Կապոյտ Հագ ՏՕԲԹ. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ

Բարեւար Արդիւններ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Արտօնատէր Վեր. Կ. Յ. Յարութեան Տնօրէն-խմբագիր Տ. Ճ. Խրտեան

Տարեկան բաժնեկին— Սուրիա, 1.50

Սուր. ոսկի. արտասահման 1.50 տոլար:

Հասցէ—

NOR AVEDAPER, B. P. 287, ALEP, SYRIE